ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԲԱՆԱԿԱՐԻՉ ԹԵՈԴՈՐ Մ.— ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԲՐՅԷՐԿԼՅԱՆ (1837—1897)

Ա. Է. ԲԱՐԱՆՉԵԱՆ

Ռումինիան հանդիսացել է Եվրոպայի հայկական հնագույն գաղթավայրերից մեկը։ Բագրատունիների հայկական թագավորության անկումից հետո, սելջուկների և մոնղոլների արշավանքների շրջանում, ինչպես նաև հետագա դարերում մեծ թվով հայեր են հաստատվել Ռումինիայի մի շարք շրջաններում՝ մասնավորապես Տրանսիլվանիայում, Բուկովինայում և Վալախիայում։ Դեռ XIV դարում Մոլդովայում հաստատված հայերն ստեղծեցին մի շարք հուշարձաններ, որոնցից մի քանիսը կանգուն են մնում մինչև այժմ։ Դարերի ընթացքում Հայաստանում, ինչպես նաև հայաշատ մի շարք վայրերում ծայր առնող քաղաքական անբարենպաստ պայմանները հետզհետե գաղթականական նորանոր քարավաններ էին ճանապարհ հանում դեպի Ռումինիայի հյուրընկալ ափերը և նոր թարմություն բերում ռումինահայ գաղութին։ Հայերը Ռումինիայում միշտ էլ արժանացել են սիրալիր վերաբերմունքի։ Շատ խորն են եղել հայերի և ռումինացիների քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը։

Հարյուրամյակներ տևող սերտ համակեցության պայմաններում, հասկանալի է, որ Ռումինիայի հայ բնակչությունը մշտական կուլտուրական շփման մեջ էր գտնվում ռումին ժողովրդի հետ։ Ռումինահայ գաղութը իր վրա կրեց ռումինական կուլտուրայի խոշոր ազդեցությունը, միաժամանակ մի շարք հայ գործիչներ, գլխավորապես արվեստի և գրականության բնագավառի աշխատողներ, կարողացան որոշ հետք թողնել ռումինական արվեստի ու կուլտուրայի զարգացման պատմության մեջ։

Ռումինական նկարչության պատմության մեջ հիշատակության արժանի անուն են թողել հայ տաղանդավոր նկարիչներ Թեոդոր Բրյուկյանը (1837—1897) և վաղամեռիկ նկարիչ-տնտեսաբան Արդար Բալտազարը (1880—1909)։ Լավ ապագա էր խոստանում նաև հայ նկարիչ Արթաքի Դավիթոգլուն, որը զոհվեց առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում։ Այժմ այս երեք հայ նկարիչների աճյունները թաղված են Յաշի և Բուխարեստի հայոց գերեզմանատներում։

Սույն հակիրճ հոդվածով մենք կաշխատենք «Հանդես»-ի ընթերցողներին ծանոթացնել ռումինահայ տաղանդավոր բնանկարիչ Թեոդոր Բրյուկյանի կյանքին և ստեղծագործությանը, այլ առիթի թողնելով ընդհանրապես Ռումինիայի նշանավոր հայ արվեստագետների մասին խոսելը։

XVI դարի վերջում, երբ Շահ Աբբասը արշավում է Հայաստան, մեծ թվով հայեր ստիպված են լինում թողնել իրենց հայրենիքը և գաղթել Ղրիմ, Մոլդովա, Տրանսիլվանիա ու Գալիցիա, իսկ մի մասն էլ՝ Վալախիա ու Ռումելիա, Դեպի Ռումելիա գաղթողների քարավանապետն էր Նսայի անունով մեկը, որը հաստատվեց Ռուսճուքում (Բուլղարիա) և թուրքերի կողմից իր թավ բեղերի համար կոչվեց «Բրյուկյը» (բեղավոր)։ Ահա և այս անունն էր, որ դարեր շարունակ իրեն ազգանուն կրեց այդ գերդաստանը՝ հայերենում «Բրյուկյան» ձևով, իսկ հետագայում ռումիներենում «Բուլյուկյիու» (Buiuciiu) ձևով։ Ռուսճուքում հայկական գերեզմանատունը մինչև այժմ էլ մնում են Բրյուկյան գերդաստանի մի շարք անդամների տապանաքարերը[1]։

XVIII դարի 2-րդ կեսում Բրյուկյանների մի ճյուղը անցավ Ռումինիա և հաստատվեց Մոլդովայի Յաշ քաղաքում[2]։

Թեոդոր-Ասվածատուր Բրյուկյանը ծնվել է 1837 թվականի մայիսի 9-ին Յաշ (Յասսի) քաղաքում։ Նա անդրանիկ զավակն էր Հակոբ Բրյուկյանի (1809—1881), որը մեծ դեր խաղաց ռումինահայերի կուլտուրական վերածննդի գործում և անմոռանալի անուն թողեց ողջ գաղութի պատմության մեջ։ Թեոդորի մայրն էր Մարիամ Բրյուկյանը (1817—1907 թթ., ծնված Թոսուն ընտանիքում)։ Թեոդորը սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի Հայկազյան դպրոցում, որից հետո իր երեք եղբայրների՝ Հովհաննեսի, Գրիգորի ու Արտաշեսի հետ ուղարկվել է Փարիզ՝ Միխիթարյանների Հանրածանոթ Մուրադյան վարժարան։ Ապագա նկարիչը հենց այդ վարժարանում է ստանում իր առաջին գեղարվեստական դաստիարակությունը։ Մուրադյան վարժարանի հարցարանությունների ժամանակ Թեոդոր-Ասվածատուրը ու նրա եղբայրները գովելի առաջադիմություն են ցուցաբերում հայոց լեզվի, պատմության, ֆրանսերենի, անգլերենի և այլ առարկաների մեջ, իսկ Թեոդորն ու նրա եղբայր Հովհաննեսը նաև նկարչության մեջ[3]։

Ավարտելով Մուրադյան վարժարանը, Բրյուկյանը Փարիզում գեղանկարչության դասեր է առնում։ Թեև նա օժտված էր տաղանդավոր նկարչի ձիրքով, սակայն սկզբում նախընտրում է զբաղվել Փարիզի թանգարաններում գտնվող արդի մեծ նկարիչների գործերի պատճենահանման աշխատանքներով։ Չեռը բերելով նկարչական հարուստ փորձ, նա անցավ ստեղծագործական ինքնուրույն աշխատանքի։ Վերադառնալով իր ծննդավայրը՝ Բրյուկյանը անհուն սիրով սկսեց ուսումնասիրել Ռումինիայի բնությունը։ Այդ երկրի գեղատեսիլ վայրերը նրա համար լավագույն ներշնչման աղբյուր հանդիսացան, թելադրելով նրան, որպեսզի իր ողջ ստեղծագործական կյանքը նվիրի բնանկարչությանը։

Գեղագիտական տեսարաններ նշմարելու նուրբ և սուր տեսողությունը, բնանկարների ռեալիստական բնույթը նկարչի անվան շուրջը ստեղծեցին մեծ համբավ և նա կոչվեց «Մոլդովայի առաջին բնանկարիչը»[4]։

Թ. Բրյուկյանի ստեղծագործական գործունեությունը 1874 թվականից առաջ է սկսվում, սակայն այդ թվականի հետ է կապված ինչպես նրա, այնպես էլ Յաշի արվեստագետների ստեղծագործական վերելքը։ Ն. Գանեն իր հուշերում պատմում է, թե ինչպես մի շարք գեղարվեստասերներ, այդ թվում Պ. Վերուսին, Թ. Բրյուկյանը, Վ. Պոպորը և ուրիշները, Յաշի Սրուլեսկուի անվան փողոցում վարձելով երկու սենյակ վերածեցին դրանք նկարչական աշխատանոցի, որը անհատական նախաձեռնությամբ Յաշում հիմնված արվեստի առաջին աշխատանոցն էր։ Ելդեղ էր, որ գովելի ջանասիրությամբ աշխատանքի անցավ նաև Թ. Բրյուկյանը[5]։

---

[1] Ն. Գասապյան, Դիվան Պուլկարահայոց պատմության, «Բրյուկյանց ճյուղագրություն», Գաղութահայ տարեգիրք, 1940, էջ 139, Բուխարեստ։

[2] Ա. Գալանջյան, Գրիգոր Մ. Բրյուկիու, Գաղութահայ տարեգիրք, Բուխարեստ, 1941, էջ 132—138։ Բրյուկյան գերդաստանի տոհմածառը մենք դասել մեր պրպտումները ընթացքում Բուխարեստում՝ Ռումինական ակադեմիայի ձեռագրական բաժնում, Բրյուկյան գերդաստանին վերաբերող փաստաթղթերի թղթապանակներից մեկում։

[3] «Բագմավեպ», 1852, էջ 313—319։

[4] *Th. Cornel*, etc., Figuri Contimporane din Romînia, Bucureşti, 1908, p. 483.

[5] *N. Gane*, Păcate mărturisite (հրտ. ենք ըստ Th. Cornel-ի Figuri Contimporane din Romînia, 1908 թ., էջ 483-ում կատարված մեջբերումի. այդ աշխատությունից ենք քաղել նաև նրա կենսագրության վերաբերող որոշ տվյալները)։

Այդ ժամանակ Յաշում նկարչական ցուցահանդեսներ համարյա թե չէին կազմակերպվում։ Արվեստագետները ստիպված էին լինում իրենց ստեղծագործությունները ցուցադրել թղթավաճառանոցների, երաժշտական գործիքների արհեստանոցների և գրախանութների ցուցափեղկերում։ Հարմարվելով ժամանակի պայմաններին՝ այդ միջոցին էր դիմում նաև Թ. Բրյուկլյանը։ Յուրաքանչյուր նկար ցուցադրելիս նա արժանանում էր մամուլի անվերապահ գնահատականների։ Այսպիսով, շուտով նա դարձավ Յաշի արվեստասեր հասարակության սիրելի բնանկարիչը։

Նրա ցուցադրած նկարներից մեկի մասին ժամանակի մամուլի էջերում կարդում ենք.

«...Շնորհավորում ենք հատկապես պ. Թեոդոր Բրյուկլյանին իր այս գեղեցիկ աշխատության համար, որը ամեն օր հիացմունքով և նոր շնորհակալական զգացմունքով դիտում ենք թղթավաճառանոցի ցուցափեղկում։ Ցանկանում ենք, եթե հնարավոր է, որպեսզի նման տրինակ աշխատանքներ սրանից հետո էլ առանց ընդմիջումի ցուցադրվեն այստեղ։ Այն օրվանից, երբ պ. Թ. Բրյուկլյանը եկավ Փարիզից, որտեղ ստացել է իր ուսումը, համարյա անդադար աշխատեց շատ բնանկարներ ստեղծագործելով, որոնք արվեստով և գեղեցկությամբ գերազանցում են իրար և որոնք թե՛ անցյալում, և թե՛ այժմ շատ գնահատված են սիրողների և բարեկամների կողմից»։

Լ. Ռոսեա՝ թերթը գտնում էր, որ նկարչի այս գործը հատկանշվում է բնականությամբ և կենսասիրությամբ։

Կուլտուրայի և լուսավորության մինիստր, փիլիսոփա Վասիլե Կոնտան (որը նույնպես հայկական ծագում ուներ)[2] 1881 թվականին Բուխարեստում նախաձեռնել էր կազմակերպել գեղարվեստի ցուցահանդես, որտեղ Թ. Բրյուկլյանը մասնակցեց հինգ արժեքավոր գործերով։ Դրանցից մեկը նկարիչը նվիրեց պետությանը և դրա համար հատուկ շնորհակալագիր ստացավ։

Բրյուկլյանը Ռումինիայում արդեն մեծ համբավ էր ձեռք բերել որպես բնանկարիչ, ահա թե ինչու 1883 թվականին արժանացավ ռումինական ազգային մեծանուն բանաստեղծ Վասիլե Ալեքսանդրիի (1821—1890) հատուկ հրավերին՝ նկարելու համար նրա ամառանոցի՝ Միրշեշտի հանրահայտ ու գեղատեսիլ պուրակը, որը անմահացրել էր Ալեքսանդրին իր բանաստեղծություններում։ Թ. Բրյուկլյանը մեծ վարպետությամբ նկարեց այդ պուրակը։ Նկարը ցուցադրվեց Յաշում, Հիրշեի և Ֆինկեի խանութի ցուցափեղկում և արժանացավ հասարակության ու մամուլի բարձր գնահատականին։ Կարծես նկարիչը մրցման էր դուրս եկել այդ պուրակը գովերգած մեծ բանաստեղծի հետ։ Թերթերը հայտնում էին, որ «վարպետորեն աշխատված» նկարը «մի հրաշալի գործ է», որ նա արտահայտում է «արվեստի խոր զգացմունքներ» և այլն, և այլն[3]։

«Միրշեշտի պուրակը» նկարի գլխավոր արժանիքներն էին զգացմունքի նրբությունը, կատարման վարպետությունը, հարուստ գունավորումը ու հղացման բնականությունը։

Այդ աշխատանքով հիացողներից մեկը գրում է. «...համարձակորեն կարող ենք ասել, որ «Միրշեշտի պուրակը» գերազանցեց մեր բոլոր սպասելիքները, և հեղինակը կարող է ինքնագոհ վաստակել բնանկարիչների շարքում։ Ազդվում ես, դիտելով այս նկարը, քանի որ մաքրամտորեն արձանանում է այն միտքը, թե այս նկարը ստեղծագործելիս շատ ուժեղ հոգեկան ապրումներ է ունեցել այն ստեղծագործող արվեստագետը, և կարծես այդ ապրումները խոսում են թեզ հետ նկարի ծառերի տերևների միջից, բյուրեղանման ալիքներից, և կամ թույլ ամպամած երկնքից...»[4]։

Այս կտավի հոչակը այնքան մեծ եղավ, որ Յաշի քաղաքային խորհուրդը գնեց այն, որպեսզի նրանով զարդարի քաղաքապետարանի մեծ դահլիճը (1883)։

Շատերը խնդրեցին նկարչին իրենց համար մեկական «Միրշեշտի պուրակ» նկարել և Վասիլե Ալեքսանդրիի այս սիրելի պուրակը ներկայացնող քսանից ավելի կտավներ այսօր էլ գտնվում են բազմաթիվ ընտանիքների տներում։ Դրանցից մեկը 1892 թվականին ցուցադրվեց Բուխարեստում։ Այդ առթիվ ռումինական թերթերից մեկում գրված էր. «Մի քանի օրից ի վեր

[1] „Curierul". Jasi, 1880, 14 մայիս, հմմտ. Figuri Contimporane din Romînia p. 486.

[2] *Octav Minar*, Filozoful Conta, ed. II, p. XIII.

[3] *Th. Cornel*, etc., Figuri..., p. 484.

[4] „Liberalul", Jasi, 1883, 20 մարտ, հմմտ. Figuri..., p. 186 – 187.

Բուխարեստի „Graeve“ գրախանութի ցուցափեղկում ցուցադրված է անմահ նկարիչ Թեոդոր Բըյըկլյանի մի նկարը։ Նրանք, ովքեր ըմբռնում են այդպիսի մեծարժեք գործերի արժեքը, կանգ են առնում և անհագորեն հիանում են նրանով, մյուսները, որոնք չեն հասկանում արվեստի կամ նկարչության էությունը, շարունակում են իրենց ճանապարհը և կամ հերթի են կանգնում առաջինների հետևից։ Բայց և այնպես նկատեցի, որ հիացողները չեն պակասում թե՛ մեկ, և թե մյուս կողմից։ Այդ նկարը ներկայացնում է Միրչեշտի պուրակը, որը նախ և առաջ այնքան նրբորեն երգեց Ալեքսանդրին։ Նրան հաջորդեց նկարիչ Բըյըկլյանը, որը իր ճանաչված վարպետությամբ պաստառի վրա անմահացրեց այն։ Պ. Բըյըկլյանի վրա, որը ֆրանսիական դպրոցի աշակերտ է, երևում է այդ դպրոցի ազդեցությունը. սակայն զգացվում է նաև, որ նրա ոճը յուրահատուկ է, կենդանի, լավատես ու բնական։

Բայց նկարի արժանիքը ավելի են մեծացնում ուժն ու կոլորիտի ճշգրտությունը, նկարչագեղ բնության ցուցադրումը, շնչող կյանքը, որ հատուկ են արվեստագետի բոլոր ստեղծագործություններին»[1]։

Յուրաքանչյուր տարի Թ. Բըյըկլյանը ցուցադրում էր հետաքրքրական բնանկարներ, որոնք էլ ավելի էին մեծացնում նրա համբավը, որպես մեծ բնանկարչի։ Նրա նկարներից մեկի կապակցությամբ այդ ժամանակվա քննադատներից մեկը գրում էր. «...Այստեղ առիթն է ասելու, որ պ. Բըյըկլյանը լրիվ կարողանում է իշխել իր ընտրած նյութերին, գույների կախարդանքին, երանգների նրբության և ներդաշնակության»[2]։

Նկ. 1. Թեոդոր Բըյըկլյան. «Դրեանդրյի երկիրը» գրքից։

Թ. Բըյըկլյանը զբաղվել է նաև գրքերի ձևավորման աշխատանքներով, կատարելով ռումինացի մեծանուն հեղինակներ Յոն Կրեանգըյի, Ա. Դ. Քսենոփոլի, Գրիգորե Ալեքսանդրեսկուի և ուրիշների գործերի նկարազարդումները։

Թ. Բըյըկլյանի ստեղծագործությունները կարելի է բաժանել երկու մասի՝ պատճենահանումներ, որոնք գտնվում են մեծ մասամբ զանազան ընտանիքների մոտ, և ինքնուրույն գործեր, որոնք մեծ մասամբ պահպանվում էին նրա կրտսեր եղբոր՝ բարձր վճռաբեկ ատյանի խորհրդական և հայտնի բանասեր Գր. Բըյըկլյանի[3] մոտ։ Գր. Բըյըկլյանը իր եղբոր ստեղծագործություններից հինգը կտակեց Յաշ քաղաքի պատկերասրահին։ Դրանք են՝ «Նորվեգական բնանկար» (ձմեռային տեսարան), «Հավաքումը» (Կուաուրբեի հետևողությամբ), «Գոթական ավերակները», «Լվացարարուհիները», «Ծառերի տակ» փոքր նկարը։ Գր. Բըյըկլյանը Բուխարեստի պատկերասրահին կտակել է նկարչի հետևյալ ստեղծագործությունները «Լոթեր ծառերի տակ» (Վանդերբուխի հետևողությամբ), «Ժայռը», «Հեռանկար լումարի միջով», «Ծառեր մի կանալի եզրին»։ Դարձյալ Գր. Բըյըկլյանը իր բարեկամ Անաստասե Սիմուին, որի անունով Բուխարեստում գոյություն ունի թանգարան, նվիրեց երեք նկար՝ «Գրուտի ափին» (մեծ բնանկար), «Ուռենիների ծառուղին», «Անասունների արբուցարանը»[4]։

[1] *Dim. Bodescu*, „Era Noua“ Jasi, 1892, հմմտ. Figuri.... p. 487—488.

[2] *D. B.*, „Era Noua“, 1897, հմմտ. Figuri..., p. 485.

[3] Ա. Քոլանջյան, նշվ. աշխ., էջ 132—138։

[4] Academia Romina, Grigorie M. Buiucliu (1840—1912). Testament, Biografie-Familia Buiucliu..., Bucureşti, 1914, p. 4.

Նկ. 2. Թեոդոր Բրյուկյան. Մի տեսարան Պրուտի ափից

Թեոդոր Բրյուկյանը զբաղվել է նաև մանկավարժական արդյունավետ և երկարատև գործունեությամբ։ Նա գծագրության ուսուցիչ էր Յաշում հայանի Խ. Գարագաշյանի դպրոցում[1], այնուհետև նկարչության ուսուցիչ է եղել գինվորական վարժարանում, Յաշի առևտրական վարժարանում, իսկ 1880 թվականից մինչև մահը՝ 1897 թվականը, աշխատել է Յաշի Գեղարվեստների վարժարանում որպես բնանկարչական ամբիոնի դեկավար։ Եղել է նաև տպարանի տեսչեն։

Սակայն Թ. Բրյուկյանի մանկավարժական արդյունաշատ գործունեությունը շատ անգամ խանգարվել է ոմանց կողմից լարված ինտրիգների հետևանքով։ Զանազան կեղծ պատճառաբանություններով ընդհատեցին նույնիսկ նրա դասերը։ Թ. Բրյուկյանը, իբրև ազատամիտ անձնավորություն, քաջաբար դիմադրեց բոլոր այն անախորժություններին, որոնք խանդարում էին նրան Յաշի Գեղարվեստների վարժարանում՝ նրա կազմակերպչական և ընթացիկ աշխատանքների ընթացքում[2]։

Թեոդոր Բրյուկյանը հանդիսացել է նաև Յաշ քաղաքի կարևոր լրագրողներից մեկը[3]։

Նա մինչև վերջ սերտ կապ պահպանեց իրեն ծնող ժողովրդի հետ։ Բրյուկյանը, ինչպես և նրա մյուս եղբայրները, ստանալով հայկական կրթություն (բացի Յաշի հայկական դպրոցից ավարտեց նաև Փարիզի Մուրատյան վարժարանի լրիվ դասընթացը), քաջ տեղյակ էր հայ թե՛ հին, թե՛ նոր լեգուներին, հայ գրականությանն ու պատմությանը։

Ռումինացի խոշոր պատմաբան Նիկոլայն Յորգան Թ. Բրյուկյանին համարում է Ռումինիայի ամենանշանավոր հայերից մեկը[4]։ Թ. Բրյուկյանը իր մանկավարժական երկարամյա պաշտոնավարության ընթացքում, որպես գծագրության ուսուցիչ պաշտոնավարեց նաև Յաշում գործող նշանավոր հայ մանկավարժ Խաչերես Գարագաշյանի գիշերօթիկ դպրոցում[5], որտեղ

[1] „Ararat", 1934, № 106. Con.e infa d-lui Gr. Trancu-Jasi.

[2] *Vlad Bănăteanu*, Armenii in istoria si in viata romineasca, Bucureşti, 1938 p. 51.

[3] *N. A. Bogdan*, Oraşul Jasi, ed. II-a. Jasi, 1913, p. 491.

[4] *N. Jorga*, Les Armeniens de Roumanie..., Bucureşti, 1929, p. 93.

[5] „Ararat", Bucureşti, 1934, № 106.

աշակերտները սովորում էին հայերեն, ռումիներեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուները։ Ռումինացի և հայ մի շարք նշանավոր գործիչներ, գիտնականներ իրենց նախնական կրթությունը այդ դպրոցում են ստացել։

Թ. Բրյուկլյանը և նրա եղբայրները Յաշում գործող գրական և արվեստագիտական շրջաններում կապեր էին հաստատել ռումինացի նշանավոր գրողների՝ Մ. Էմինեսկուի, Յոն Կրեանգրյի, Վասիլե Ալեքսանդրիի, Յոն Լուկա Կարաջիալեի, Յոն Սլավիչի և ուրիշ շատերի հետ։ Թ. Բրյուկլյանը և նրա եղբայրները սերտ կապ էին պահպանում նաև հայտնի հայ մտավորականների, ինչպես, օրինակ, պրոֆ. Յ. Մելիքի, գեներալ Չերքեզի, պրոֆ. Պ. Սիսիրի, Գր. Լ. Թրանբու Յաշի և ուրիշների հետ։ Նա միաժամանակ մտերիմ էր հայ բանաստեղծներ և անխոնջ մանկավարժներ Ա. Գարաղաշյանի, Լ. Սրմագաշյանի, տպագրիչ և հրապարակախոս Թեոդոր Բալասանի և ուրիշների հետ։

Թ. Բրյուկլյանի բնանկարչական արվեստի կատարելագործման համար անկասկած նշանակալից դեր է խաղացել նաև նրա կողմից հայ նկարիչների աշխատանքների ուսումնասիրումը։ Բրյուկլյանների տանը գտնվում էին Այվազովսկու, Ոսկանյանի, Շապանյանի մի շարք գործերը։

Թ. Բրյուկլյանը մեռավ 1897 թվականի սեպտեմբերի 3-ին իր ստեղծագործական կյանքի ծաղկման շրջանում։

Ռումինական ժողովուրդը միշտ էլ հարգել է և այժմ էլ ավելի մեծ սիրով շարունակում է մեծարել հայ տաղանդավոր բնանկարիչ Թեոդոր Բրյուկլյանի պայծառ հիշատակը։ Դեռևս 1909 թվականին հրատարակված „Figuri Contimporane din Romînia"[1] («Ժամանակակից դեմքեր Ռումինիայում») հանրագիտարանում (լույս տեսած ռումիներեն և ֆրանսերեն լեզուներով) մի ամբողջ պրակ նվիրված է Բրյուկլյան գերդաստանին ու նրա տաղանդավոր անդամներին, ընդ որում մեծ տեղ է հատկացված Թ. Բրյուկլյանի կյանքին և ստեղծագործական գործունեությանը, զետեղված են նաև նրա բազմաթիվ գործերի ընդօրինակությունները։ Ավելի ուշ, դարձյալ մի այլ հանրագիտարանում, Թ. Բրյուկլյանի կյանքին են նվիրված մի շարք ուշագրավ տեղեկություններ[2]։ Ռումինական Ակադեմիայի նշանավոր գրադարանի իլյուստրացիոն բաժնում պահպանվում է նաև Թ. Բրյուկլյանի աշխատանքների մի զգալի մասի լուսատիպ ալբոմը։

Վերջին տարիներս ռումինական գրականության պատմության նոր հրատարակության Ա. հատորում բանաստեղծ Վ. Ալեքսանդրիի կյանքին նվիրված բաժնում զետեղված է բանաստեղծի աղջկա՝ Մարիա Բոգդանի կողմից կատարված Բրյուկլյանի «Միրչեշտի պուրակը» նկարի[3] մի պատճենը։

Վերջերս Բուխարեստում այցելելով Ռումինական Ժող. ռեսպուբլիկայի արվեստի թանգարանը (նախկին թագավորական պալատում), որը բացվել է Ռումինական Ժող. ռեսպուբլիկայի կուլտուրայի մինիստրության կողմից, համաշխարհային կլասիկ նկարիչների՝ Ռեմբրանդտի, Բասանոյի, Տինտորետտոյի, Վելասկեզի, էլ Գրեկոյի, Ռուբենսի, Դելակրուայի և ուրիշ շատ-շատերի աշխատանքների կողքին ռումինական կլասիկ նկարիչների՝ Հ. Գրիգորեսկուի, Թ. Ամանի, Բրնչիլրյի և ուրիշների շարքում մենք տեսանք նաև Թեոդոր Բրյուկլյանի մի բնանկարը՝ նկարված 1878 թ.[4]։

Թ. Բրյուկլյանի ստեղծագործություններից շատերը այժմ էլ շարունակում են ցուցադրվել Յաշի պատկերասրահում, Բուխարեստի Սիմուի անվան թանգարանում և ուրիշ տեղեր, և արժանանում են այցելողների հետաքրքրությանն ու ջերմ գնահատությանը։

---

[1] *Th. Cornel*, Figuri Contimporane din Romînia, Bucureşti, 1909, p. 473–492, Թ. Բրյուկլյանին են վերաբերում 483–488 էջերը։

[2] *L. Predescu*, Enciclopedia Cugetarea, 1940, p. 137—138.

[3] „Istoria Literaturii Romîne", vol. I, 1954, p. 237.

[4] Տե՛ս նաև Ministerul Culturii.,— Muzeul de artă al RPR, galeria Naţionala Catalog, p. 49.

ТАЛАНТЛИВЫЙ ПЕЙЗАЖИСТ ТЕОДОР М.-АСТВАЦАТУР БУЮКЛЯН (1837—1897)

С. Э. КОЛАНДЖЯН

(Р е з ю м е)

Теодор Буюклян (Buiucliu) родился в 1837 г. в Яссах. Начальное образование он получил в местной армянской школе, а затем учился в Париже, в армянском колледже Мурадян, где и получил свое первое художественное образование. По окончании колледжа он оставался некоторое время в Париже, где занимался живописью.

Вернувшись на родину, в Яссы, он продолжал работу в этой области, рисуя почти исключительно пейзажи. Вскоре его стали называть первым пейзажистом Молдавии. Популярность его была так велика, что известный румынский поэт Василэ Александри пригласил его в 1883 г. в Мирчешт и просил нарисовать знаменитую рощу Мирчешт, которую он обессмертил в своих произведениях. Буюклян исполнил просьбу поэта, и его мирчештский пейзаж удостоился единодушного признания со стороны румынской общественности и печати. Городское управление города Яссы приобрело это полотно и выставило в зале ратуши.

Т. Буюклян никогда не порывал связи с родным армянским народом и тесно общался с передовыми деятелями армянской культуры. Он внимательно изучал работы крупнейших армянских живописцев, и это отразилось на его творчестве.

Т. Буюклян умер 3 сентября 1897 г. Его жизни и деятельности посвящено много статей в румынской печати.

Картины Т. Буюкляна часто демонстрируются на выставках на его родине — в Яссах, а также в музее имени Симу в Бухаресте и других местах. Один из его пейзажей выставлен в музее искусств Румынской Народной Республики, где собраны произведения классиков мировой и румынской живописи.